

«ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
«ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԻ
ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՍՖԱԼՏԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՍԵՅՐԱՆ-ՇԱՆԹ» ՍՊԸ

Տնօրեն՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երևան – 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8
1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	8
1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	17
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	19
2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	19
2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	19
2.3 Կլիմա	20
2.4 Մթնոլորտային օդ	22
2.5 Ջրային ռեսուրսներ	23
2.6 Հողային ծածկույթ	24
2.7 Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ	27
2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ	28
3.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	30
3.1 Կոտայքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը	30
4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	34
4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը	34
4.2. Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները	35
5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	35
5.1 Մթնոլորտային օդ	36
5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր	37
5.3 Հող	37

5.4 Բուսական և կենդանական աշխարհ	39
5.5 Պատմամշակութային արժեքներ	40
6 Սոցիալական ազդեցություն	46
7. Բնապահպանական մշտադիտարկումների պլան	47
Մշտադիտարկումների քարտեզ	48
Հավելվածներ	49

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

**Շրջակա միջավայր`** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

**ձեռնարկող`** սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

**ազդակիչ համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

**գործընթացի մասնակիցներ`** պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ`

ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրության փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջապարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (m^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի ասֆալտի և խճի արտադրության գործարանը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ Մարտունի-Վարդենիս ավտոմայրուղու ձախ հատվածում, բնակելի տարածքից դուրս, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում: Գործարանը կազմված է ասֆալտբետոնի արտադրության հանգույցից, խճի հումքի կոտորակման և պահեստավորման տեղամասերից, այլ օժանդակ արտադրամասերից, այդ թվում վարչական շենքից: Արտադրական տարածքի մակերեսը կազմում է 1.4հա:

2010թ-ի սեպտեմբերի 01-ին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի ասֆալտի և խճի արտադրության գործարանի նախագծի վերաբերյալ տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության թիվ ԲՓ-88 դրական եզրակացությունը: Ասֆալտբետոնե խառնուրդների արտադրության DC-117 տեսակի գործարանի նախագծային արտադրողականությունը ասֆալտի բոլոր տեսակների համար կազմում է 25-30տ/ժամ, իսկ նախատեսվող կոտորակիչի արտադրողականությունը՝ 40-50տ/ժամ: Հաշվի առնելով նախատեսվող ճանապարհային աշխատանքների ծավալները ասֆալտի գործարանի պլանային արտադրողականությունը հաշվարկված է 38000տ/տարի, խճի համար՝ 60000տ/տարի:

Արտադրական հզորությունների ողջ ներուժի օգտագործման նպատակով ընկերությունը ցանկանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր: Նպատակն է՝ հանքավայրերի ընդերքօգտագործման արդյունքում լցակույտերում տեղադրված թափոնների (մակաբացման ապարների (հողագրունտի), արտադրական թափոնների, խճաքարային փոշի), ինչպես նաև ճանապարհների վերանորոգման ընթացքում ֆրեզավորված ասֆալտբետոնի թափոնների վերամշակում ընկերության գործարանում՝ խճի և ավազի ստացման և հետագա օգտագործման նպատակով: Նախատեսվում է ճանապարհների օգտագործված ասֆալտը՝ վերամշակումից հետո, որպես երկրորդային հումք, խճի տեսքով, կրկին օգտագործել

ասֆալտբետոնի արտադրության մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը ցանկանում է ճանապարհների շինարարության ժամանակ ֆրեզային մեքենաների կիրառմանը ֆրեզավորել ճանապարհի ասֆալտբետոնի շերտը, տեղափոխել ընկերության գործարան, դրանից ստանալ համապատասխան ֆրակցիայի խիճ, ավելացնել ասֆալտի արտադրությամբ պահանջվող տեխնոլոգիաներին համապատասխան հավելանյութեր, ստանալ նոր ասֆալտբետոն և այն կրկին օգտագործել ճանապարհների շինարարության ընթացքում կամ վաճառել նման գործունեությամբ զբաղվող ընկերություններին:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ անմիջական ազդեցության գոտում (որտեղ գտնվում է նաև ընկերության գործարանը), արգելվում են՝

«ա) էկոլոգիապես վնասակար, օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

բ) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը և տեղադրումը.

գ) հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

դ) քարածխի և հեղուկ վառելանյութի բազայի վրա աշխատող 10 մեգավատտից ավելի հզորությամբ ջերմային էներգիայի աղբյուրների գործարկումը»:

Նախատեսվող գործունեությունը չի հակասում վերոգրյալ օրենքի պահանջներին, օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործում չի նախատեսվում, ինչը հնարավորություն է տալիս հավաստել, որ նախատեսվող գործունեության իրականացմամբ Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակին վնաս չի հասցվի:

Վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստանալու դեպքում ընկերությունը լրացուցիչ պայմանագրեր կկնքի ճանապարհաշինության ոլորտում աշխատող ընկերությունների հետ:

1.1.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Բազալտների հանքավայրի շահագործման ընթացքում առաջացող թափոնները (մակաբացման ապարները (հողագրունտը), արտադրական թափոնները և խճաքարային փոշին) պահեստավորվում են դրանց համար նախատեսվող լցակույտերում: «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի կողմից բազալտների հանքավայրում առաջացող թափոնների տեղափոխումը դեպի ընկերության գործարանի տարածք կատարվելու է «Շանթ-Սեյրան» ՍՊ ընկերության տեխնիկական միջոցներով՝ էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով՝ թափոնները էքսկավատորի միջոցով բարձրվելու են ավտոինքնաթափերը և տեղափոխվելու գործարանի տարածքում գտնվող կոտորակիչ՝ հետագա վերամշակման և օգտագործման համար: Լեռնային զանգվածի տեղափոխումը կատարվելու է ըստ անհրաժեշտության, կապված ասֆալտի կամ խճի շուկայական պահանջարկից:

Հեռավորությունը հանքավայրից մինչև գործարանի կոտորակիչ կազմում է 7կմ:



Բազալտների արդյունահանման արդյունքում առաջանում են թափոններ հետևյալ բնութագրերով.

«Ժայռային մակաբացման ապարներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3400011001995:

Վտանգավորության դասը՝ 5/ ոչ վտանգավոր:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բնութագիրը՝ ոչ հրդեհավտանգ, ոչ լուծելի:

Հանքաբանական բաղադրությունը՝ բազալտ և հողագրունտ:

Թափոններն առաջանում են հանքավայրի արդյունահանման ընթացքում:

«Խճաքարային փոշի» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3140090111004:

Վտանգավորության դասը՝ 4/քիչ վտանգավոր

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – խճաքարային փոշի՝ 100%:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, կարող է առաջացնել տարածքի աղտոտում, էկոթունավոր է, փոշին կարող է առաջացնել շնչառական օրգանների և աչքերի քրոնիկ հիվանդություններ:

Թափոնները գոյանում են բազալտների արդյունահանման և ճանապարհային շինարարության աշխատանքների արդյունքում:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ նման մոտեցման պայմաններում հնարավորություն է ստեղծվում հանքավայրի շահագործումն իրականացնել առանց հողերի լրացուցիչ մակերեսները լցակույտերով ծանրաբեռնելու, փոշեառաջացման նոր աղբյուրների առաջացումը բացառելով: Մակաբացման ապարների վերամշակման արդյունքում ստեղծվում են նոր աշխատատեղեր, սոցիալական վիճակի լավացում, լցակույտերը չեն դառնում շրջակա միջավայրի աղբոտման աղբյուրներ:

Ճանապարհային շինարարության ընթացքում նախատեսվում է ֆրեզավորված ասֆալտը և դրա թափոնները նույնպես տեղափոխել ընկերության գործարանի

կոտորակիչ՝ խճի և ավազի ստացման և ասֆալտֆետոնի արտադրության մեջ հետագա օգտագործման համար:

«Ասֆալտի և ասֆալտֆետոնի խառնուրդի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 31401200 01 00 4:

Վտանգավորության դասը՝ 4 /քիչ վտանգավոր/

Ֆիզիկական բնութագիրը՝ կոշտ

Բաղադրությունը – ասֆալտի և ասֆալտֆետոնի խառնուրդի մնացորդներ:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, կարող է առաջացնել տարածքի աղտոտում, էկոթունավոր է, փոշին կարող է առաջացնել շնչառական օրգանների քրոնիկ հիվանդություններ:

Թափոններ գոյանում են ճանապարհային շինարարության աշխատանքների արդյունքում:

Գործարանը բաղկացած է հետևյալ արտադրամասերից՝

- ջարդման և տեսակավորման արտադրամաս՝ խճի և ավազի տարբեր ֆրակցիաների ստացման համար,

- ասֆալտի պատրաստման արտադրամաս՝ տեղում արտադրվող խճի և ավազի օգտագործմամբ:

Բնական քարից և ասֆալտֆետոնի թափոններից ստացվող խիճն (խճաքար) ունի սուրանկյուն ձև կամ անհարթ մակերևույթ, շնորհիվ որի նրա կաշտումը կապակցանյութերի հետ ավելի կայուն է, քան կոպիճինը: Խճում քիչ են կամ բացակայում են օրգանական խառնուրդները և փոշենման մասնիկները, այդ իսկ պատճառով այն հանդիսանում է լավ լցանյութ:

Ասֆալտը (հունարեն asphaltos-լեռնային խիժ) իրենից ներկայացնում է բիտումների և հանքային նյութերի (կրաքար, ավազ, մանրախիճ) խառնուրդ: Կիրառում են ճանապարհների բարեկարգման համար, որպես ծածկող, հիդրոմեկուսիչ նյութ:


Ասֆալտբետոնային խառնուրդը իրենից ներկայացնում է ռացիոնալ ընտրված հանքային նյութերի (խիճ, ավազ և հանքային ավազ) և ծանապարհային բիտումի խառնուրդ, որը պատրաստվում է մասնաբաժիններով և տաք վիճակում խառնվում:

Ստացվող խճի և ավազի օգտագործմամբ ընկերության գործարանում արտադրվում են ասֆալտի հետևյալ մակնիշները՝

- մանր հատիկավոր խիտ տիպ A, ГОСТ 9128-97
- մանր հատիկավոր խիտ տիպ B, ГОСТ 9128-97
- խոշորհատիկավոր խիտ տիպ Б, ГОСТ 9128-9
- III MA-15, ГОСТ 31015-2002
- ավազային խիտ տիպ Г, ГОСТ 9128-97
- խոշորավազային, ГОСТ 9128-97:

Թափոնների տեսքով ներկրված հումքը ենթարկվում է առաջնային ջարդման այտավոր ջարդիչում: Ջարդված ապարը տալիս են քարմաղման՝ չոր եղանակով:

Խճի ստացման տեխնոլոգիական սխեման հետևյալն է.



Քարմաղի արգասիքների 80%-ը կազմում է խոշոր ֆրակցիան՝ 10-50մմ չափերով, այն ուղղվում է ջարդման 2-րդ փուլ՝ ռոտորային ջարդիչում, այնուհետև՝ քարմաղման: Արդյունքում ստացվում է 3 դասերի պատրաստի խիճ, հետևյալ հարաբերակցությամբ.

- 0-5մմ դաս՝ 40%,
- 5-10մմ դաս՝ 20%,
- 10-20մմ դաս՝ 20%:

Մտացված արտադրանքը պահեստավորվում է առանձին պահեստներում, որտեղից ուղարկվում է սպառողներին կամ օգտագործվում ասֆալտի արտադրությունում:

Առաջին քարմաղի մանր 0-10մմ ֆրակցիան (քարմաղի ներքևի դասը 20%), պարունակում է կավային մասնիկներ և տրվում է դասակարգման պարույրավոր դասակարգիչ: Դասակարգումը իրականացվում է թաց եղանակով:

Դասակարգչի ավազները (խոշոր դասը), 60% խոնավությամբ, ենթարկվում է բնական չորացման, որից հետո ուղարկվում է պահեստ:

Արտադրողականությունը

Ասֆալտբետոնային խառնուրդների արտադրության ՄС-117 տեսակի գործարանի արտադրողականությունը բոլոր տեսակի ասֆալտի մակնիշների համար կազմում է 25-30տ/ժամ, մանրացված խճի և ավազի արտադրողականությունը՝ 40-50տ/ժամ:

Ասֆալտի գործարանի տարեկան արտադրողականությունը կազմելու՝ 38000տ/տարի: Ավազի և խճի համար՝ 60000տ/տարի:

ՎԵՐԱՄՇԱԿՎՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Թափոնի անվանումը	Ծածկագիրը ըստ <<Թափոնների ցանկի>>	Թափոնի վտանգավոր հատկությունները	Թափոնի վտանգավորության դասը	Քանակությունը մ ³ /տ/տարի
1	2	3	4	5
Ժայռային մակաբացման ապարներ	3400011001995	Ոչ վտանգավոր	5-րդ	12000 մ ³ /տարի կամ 30000տ/տարի
Խճաքարային փոշի	31400901 11 00 4	Քիչ վտանգավոր	4-րդ	2000 մ ³ /տարի կամ 5000տ/տարի
Ասֆալտի և ասֆալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4	Քիչ վտանգավոր	4-րդ	10000 մ ³ /տարի կամ 25000տ/տարի
Ընդամենը				24000մ³/տարի կամ 60000 տ/տարի

Ընդերքօգտագործման թափոնների և ֆրեզավորված ասֆալտ վերանշակման արդյունքում գործարանի արտադրողականության ավելացում չի նախատեսվում, ինչը նշանակում է, որ շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջանա:

1.1.2. Ջրամատակարարումը և ջրահեռացումը

Արտադրամասի ջրամատակարարումը կատարվում է արտադրամասը խմելու ջրով ապահովելու, իներտ նյութերի պահեստների ջրցանի, ոռոգման նպատակով:

Տնտեսական և խմելու ջրօգտագործման բնութագիրը.

Խմելու ջրի համար օգտագործվում է գործարանի հարևանությամբ գտնվող ջրի աղբյուրը (տես լուսանկարը):



Խմելու ջրի օրեկան ծախսը հաշվարկված է 25.0լ (0.025մ³) մեկ մարդու համար, տեխնիկական ջրցանի համար՝ 0.5լ/մ²:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությունով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ աշխատողների թիվն է - 3

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - բանվորների թիվն է - 8,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 176օր:

Այսպիսով՝ $W = (3 \times 0.016 + 8 \times 0.025) \times 176 = 43.7$ մ³/տարի, միջին օրեկան 0.25մ³:

Իներտ նյութերի պահեստների հրապարակների ջրցանի ծախսը կազմում է՝

$$W = 0.0005 \times S \times k \times T$$

Որտեղ՝ S - տարածքի մակերեսն է, 2000մ²

k – ջրցանի քանակը 1 օրում, 1

T – ջրցանի օրերի թիվը տարվա ընթացքում:

$$W = 0.0005 \times 2000 \times 1 \times 120 = 120$$
մ³/տարի կամ 1մ³/ օր:

Կանաչ տարածքների ոռոգման ջրապահանջի հաշվարկ.

$$W = 0.003 \times S \times k \times T$$

Որտեղ՝ S - տարածքի մակերեսն է, 3360մ²

k – ջրցանի քանակը 1 օրում, 1

T – ջրցանի օրերի թիվը տարվա ընթացքում:

$$W = 0.003 \times 3360 \times 1 \times 120 = 1210$$
մ³/տարի կամ 10.08մ³/օր:

Ընկերության ջրապահանջը կկազմի.

$$Q = W_{\text{խմ}} + W_{\text{պահ}} + W_{\text{ոռ}} = 43.7 + 120 + 1210 = 1373.7$$
մ³/տարի կամ 11.45մ³/օր:

Ջրհեռացում.

Տարածքների ջրցանը և ոռոգումը դասվում են անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի հաշվարկվում:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում: Կենցաղային կեղտաջրերը կազմում են՝ $0.25 \times 0.85 = 0.21 \text{մ}^3$:

Կեղտաջրերը հեռացվում են դեպի նշված նպատակների համար նախատեսված, գործարանի տարածքում գտնվող սեպտիկ հորը (տես լուսանկարը), որտեղից դրանք կհեռացվեն ըստ անհրաժեշտության, համապատասխան գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից:



Ընկերությունը աշխատում է լրիվ շրջանառու համակարգով: Ձեռնարկության գործունեությունից հոսքաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ տեղի չի ունենում:

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն իր գործունեության ընթացքում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային

պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

Դրանք են՝

- 1 ՀՀ Հողային օրենսգիրք
- 2 ՀՀ Ջրային օրենսգիրք
- 3 ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- 4 ՀՀ Անտառային օրենսգիրքը
- 5 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- 6 „Կենդանական աշխարհի մասին„ ՀՀ օրենք
- 7 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք
- 8 «Թափոնների մասին» ՀՀ օրենք
- 9 «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք
- 10 «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենք
- 11 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
- 12 «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենք
- 13 «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը
- 14 «ՀՀ կառավարության 18.01.2007թ «Սևան» ազգային պարկի 2007-2011թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» թիվ 205-ն որոշումը
- 15 ՀՀ կառավարության 30.05.2002թ-ի «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 927-ն որոշումը
- 16 ՀՀ կառավարության 22.02.2018թ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության

կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 191-ն որոշումը

17 ՀՀ կառավարության 2008թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-ն որոշում

18 ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշում

19 ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշում

20 ՀՀ կառավարության 2014 թ-ի հունիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 781-ն որոշում:

18. ՀՀ կառավարության 2014թ-ի սեպտեմբերի 25-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1059-Ն որոշումը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Նախատեսվող արտադրամասի տարածքը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն բնակավայրի վարչական տարածքում:

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Մակերևույթը հիմնականում լեռնոտ է՝ հանգած հրաբխային կոների (Վարդենիս՝ 3522մ, Սանդուխտսար՝ 3554մ և այլն), լեռնավահանների և նրանց միջև ընկած սարավանդների և գոգավորությունների զուգակցությամբ:

Վարդենիսի լեռնաշղթան 60կմ երկարությամբ ձգվում է արևմուտքից արևելք՝ Գնդասար լեռնազանգվածից մինչև Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասը:

Կամարաձև լեռնաշղթա է: Հյուսիսային լանջերը աբրազիոն դարավանդներով ցածրանում և ձուլվում են Սևանի լճամերձ հարթավայրին ու կտրտված են Կարճաղբյուր, Ալուչալու, Վարդենիս, Աստղաձոր, Մարտունի, Մասրիկ գետերի V-աձև հովիտներով:

Հարավային լանջերը զառիթափ ու ժայռոտ են՝ կտրտված Եղեգիսի և նրա հովիտների վտակներով:

Ջրբաժան գոտին նեղ է՝ կտրտված տաշտակաձև խոր հովիտներով: Կան ռելիեֆի սառցադաշտային և երոզիոն ձևեր:

Ընդհանուր առմամբ շրջանին բնորոշ լանդշաֆտը 10-12° թեքությամբ լանջեր են, սակայն բուն երևակման տարածը իրենից ներկայացնում է արևելքից և արևմուտքից սահմանափակված սարահարթ:

Սողանքային երևույթներ գործարանի տարածքում չեն արձանագրվել:

2.3 Կլիմա

Կլիման չափավոր ցուրտ է: Տարածաշրջանում ցայտուն արտահայտված է բնակլիմայական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը. ցածրադիր վայրերում ջերմաստիճանը 5–10°C-ով բարձր է և բարձրադիր վայրերի ջերմաստիճանից: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում 6°C է, բարձրադիր վայրերում՝ –4°C, հունվարինը՝ համապատասխանաբար –5°C և –14°C, հուլիսինը՝ մինչև +16°C և +10°C: Օդի առավելագույն ջերմաստիճանը դիտվում է հուլիսին՝ +34°C, իսկ նվազագույնը հունվարին՝ –32°C: Ձնածածկույթի առավելագույն բարձրությունը 1.5մ է: Աշնան, ձմռան և գարնան ամիսներին տիրապետում են հարավ-արևմտյան քամիները՝ 25-30մ/վրկ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը՝ 492մմ է:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձրագույն մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Մարտունի	1943	-5.7	-5,8	-1,7	4,8	9.0	12.9	16.0	15.8	12.8	7.5	2,4	-2.9	5.4	-32.0	34.0

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Մարտունի	68	71	69	66	68	70	72	72	65	65	66	68	68	64	51

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	միջին ամսական													Ձնածածկույթ		
	Տեղումների քանակը $\frac{\text{օրական առավելագույն}}{\text{մմ}}$															
	ըստ ամիսների.												Տար-կան	Առավ. տասնօրյա բարձ-ր, սմ	Տարվա ձնածածկույթի օրերի քան-ը	Ձյան մեջ ընկած առավելագույն քանակը, մ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	II				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Մարտունի	23	28	41	54	71	69	42	29	33	39	39	24	492	75	103	151
	51	34	40	46	41	69	65	37	59	49	84	41	84			

Քամիները.

Վրտակող վ-ի անուն	(տն) յունցի օգտագործող	Սահմաններ	Կրկնելիությունը, %									Անոթմունքների կրկնելիությունը	Սիջին ամսական	Սիջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			ըստ ուղղությունների															
			Միջին արագությունը, մ/վ															
			Հյուսիսային	Հյուսիս-Արևելյան	Արևելյան	Հարավ-Արևելյան	Հարավ	Հարավ-Արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-Արևմտյան	Հյուսիս Արև-մտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Մարտունի	805,1	հունվար	5	1	1	2	49	37	3	2	85	3,7	2,6	43	25	27	28	
			1,7	1,7	1,6	2,2	3,6	4,0	2,4	2,2								
		ապրիլ	11	5	3	2	40	30	5	4	78	2,9						
			1,9	2,0	1,7	2,2	3,4	3,8	2,4	2,0								
		հունիս	30	12	4	1	20	17	5	11	71	1,6						
			2,0	2,1	1,8	1,5	1,7	1,9	1,8	2,0								
		հոկտեմբեր	9	5	2	2	40	35	4	3	83	2,5						
			1,8	1,7	1,6	1,7	2,6	3,1	2,3	1,9								

Անարև օրերի քանակը

Բնակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների												ար-ն
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
Մարտունի	3	2	2	2	0.5	0	0,1	0,2	1	1	2	2	16

2.4 Մթնոլորտային օդ

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Վաղաշեն բնակատեղին, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ³ ;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³ ;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³ ;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³ :

2.5 Ջրային ռեսուրսներ


Տարածաշրջանի գլխավոր ջրային արտերիաներից են Սևանա լիճ թափվող Մարտունի և Արգիճի գետերը:

Մարտունի գետը սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 3300 մ բարձրությունից: Երկարությունը 27,6 կմ է, ջրհավաք ավազանը՝ 101 կմ²: Գետահովիտը վերին հոսանքում V-աձև է, միջինում՝ տաշտակաձև: Մնումը հիմնականում ձնաանձրևային (58%) է, վարարումը՝ ապրիլ-մայիսին: Տարեկան միջին ծախսը 1,44 մ³/վ է: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Արգիճի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից՝ 2600 մ բարձրությունից: Երկարությունը 51 կմ է, ջրահավաք ավազանը՝ 384 կմ²: Վերին հոսանքում անցնում է համանուն գոգավորության ճահճապատ տարածքով դեպի հյուսիս՝ առաջացնելով գետոլորան-ներ, Արմաղանի արևելյան ստորոտի մոտ հոսում է ոչ խոր ձորով, ապա թափվում Սևանա լիճը: Մնումը հիմնականում հալոցքային է (55%) և ստորերկրյա (36%) է, վարարումը՝ ապրիլ-հունիսին: Տարեկան միջին ծախսը 5,18 մ³/վ է, հոսքը՝ 163 միլիոն մ³: Ձմռանը սառցակալում է: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է ՀՀ տարածքի, այդ թվում Սևանի ջրավազանային կառավարման տարածքի (նկար 6) մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:

Կատարված դիտարկումների ամփոփ միջինացված ցուցանիշներին համաձայն Մարտունի գետի որակը (Գեղհովիտից 0,5կմ վերև և գետաբերանում) գնահատվում է որպես 2-րդ դասի և «լավ» որակի, իսկ Արգիճի գետի ջրերը (Լեռնակերտ գյուղից 0,5կմ վերև)՝ որպես 3-րդ դասի և «միջակ» որակի՝ պայմանավորված ԹՔՊ-ի, ֆոսֆատ իոնի, վանադիումի և երկաթի պարունակություններով:



Ջրահոսքը կապված է Մարտունի գետի հովտի հետ, որը վրաձածկվել է Արմաղան հրաբխի լավային հզոր ծածկոցներով: Ջրահոսքի լայնությունը մոտ 5կմ է: Ըստ հիդրոերկրաբանական հորատանցքերի տվյալների՝ ժամանակակից և չորրորդական նստվածքների տակ տեղադրված են գրեթե ջրագուրկ պալեոգենի հրաբխային ապարները: Հորատանցքերով ջրային հորիզոններ հատվել են 50-55մ, 85-90մ և 210-230մ միջակայքում և կապված են պլիոցենյան պորֆիրիտների հաստվածքի հետ:

2.6 Հողային ծածկույթ

Շրջանի լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Կլանող համալիրում Ca-ի և Mg-ի հետ մեկտեղ զգալի տեղ է զբաղեցնում նաև H-ը (մինչև 10-12.5,

իսկ առանձին դեպքերում՝ մինչև 21-23 մ.էկվ 100 գ հողում): Այս հողերը պարունակում են նշանակալից քանակությամբ ազոտ և ֆոսֆորական թթու: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Հողաբուսական շերտը (0.15-0.30մ) ներկայացված է մարգագետնային ճմային թույլ-հագեցած հողերով, որոնք խառնված են լանջային փուխր բերվածքների հետ: Դրանք խիստ քարքարոտ, որպես վարելահող օգտագործելու համար ոչ պիտանի հողեր են, ծառայում են որպես արոտավայր: Լեռնամարգագետնային ճմատորֆային և ճմային հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները բերված են աղյուսակում:

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումությամբ, %	Ընդհանուր ազոտը, %	Կլանված կատիոնների քանակությունը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլոգիական թթվությունը
Ճմային լեռնամարգագետնային	0-7	15.8	0.78	37.3	5.5	10.6
	7-15	10.7	0.67	22.9	5.1	9.8
	15-27	7.6	0.48	23.9	5.3	9.4
	27-41	4.3	0.35	14.9	5.5	8.0

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
Մևահողանման մարգագետնատա- փաստանային	0-5	18.1	49.3	6.2	4.6
	5-14	10.8	49.4	6.7	8.0
	14-27	7.8	44.7	6.7	7.5
	27-40	5.8	28.6	6.8	4.6
	40-61	2.0	22.7	6.8	2.7
	61-82	0.8	21.5	6.9	1.6
	82-120	0.4	22.0	7.0	1.4

Լեռնադարչնագույն հողատիպը Հայաստանում տարածված է հիմնականում 500-1700մ ծ.մ. բարձրությունների սահմաններում, իսկ հարավային դիրքադրության չորային լանջերում դրանք հասնում են մինչև 2400մ բարձրության: Փոփոխական խոնավ կլիման, հողառաջացման ակտիվ շրջանի մեծ տևողությունը, բավարար ներքին դրենաժային համակարգի առկայությունը և ներհողային հոսքերի ուղղությունների սեզոնային փոփոխությունը նպաստում է առաջնային միներալների խորը և ինտենսիվ հողմնահարմանը, երկրորդային հանքային նյութերի առաջացմանը, ինչպես նաև բավականին հզոր կավայնացված հողերի ձևավորմանը:

Ստորև աղյուսակ 6-ում ներկայացված են դարչնագույն հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները:

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը , %	CO ₂ , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
Լվացված դարչնագույն հողեր	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.14	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3
Կարբոնա- տային դարչնագույն հողեր	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Արտադրամասի շրջանին բնորոշ են հետևյալ բուսական գոտիների զարգացումը .

1. տափաստանային տարախոտա-հացազգային բուսականություն՝ *Festuca*, *Koeleria*, *Stipa*, *Artemisia*, *Astragalus* ցեղերի տեսակների մասնակցությամբ,

2. Լեռնային չորասեր թփուտներ և մացառուտներ *Amygdalus*, *Felziana*, *Cerasus incana*, *Rhamnus pallasii* և այլի մասնակցությամբ:

Շրջանի մարգագետնատափաստանային բուսականության առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրածն (*Koeleria cristata*), դաշտավլուկ ալպյան (*Poa alpina*), գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), բրոմոպսիս խայտաբղետ (*Bromopsis variegata*), քոսքոսիկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), երեքնուկի (*Trifolium*) տարբեր տեսակներ և այլն:

Արիդային նոսրանտառները ներկայացված են սաղարթավոր տեսակներով՝ փռչնի ներկատերև, տանձենի ուռատերև, նշենի ֆենցլի, ցաքի փշոտի, դժնիկ քաղցրի ու շիբլակով:

Ուսումնասիրվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը՝ տարածքում հազվագյուտ, պահպանվող բույսերի պոպուլյացիաներ հայտնաբերելու նպատակով: Արտադրամասի հարակից տարածքներում նման բուսատեսակների աճելավայրեր չեն արձանագրվել:

Մարտունի-Գավառ ճանապարհի մոտ, «Սևան» ազգային պարկում աճում է մուտինուս շնային վտանգված տեսակը: Արգիճի գետի երկայնքով հայտնի են մեխակ Գրոսհայմի և գրենլանդիա խիտ վտանգված տեսակների աճելավայրեր:

Տարածաշրջանին բնորոշ է լեռնատափաստանային գոտու ֆաունան, որը համեմատաբար միատեսակ է և աղքատ, ինչը պայմանավորված է նրա ձևավորման

երիտասարդ հասակով : Անողնաշարավորներից այստեղ հանդիպում են ծղրիդներ, մորեխներ, երկթևանիներ և բզեզներ, հերպետոֆաունայից առավել տարածված են մողեսները (*Lacerta armeniaca*, *L. dahli*, *L. nairensis* և այլն):

Թռչնաշխարհում գերիշխում են ճնճղուկանմանները և ճուռականմանները: Այս գոտին առավել բարենպաստ են թփուտային դաշտամկան, աղվեսի, կուտորայի, գայլի համար: Որոշ կաթնասունների առկայությունը տափաստանային գոտում կրում է սեզոնային, կերային կամ բազմացման հետ կապված ընտրողականությունը:

Արտադրամասի տարածքում կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել:

Ուսումնասիրվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը՝ տարածքում հազվագյուտ, պահպանվող կենդանիների ապրելավայրեր հայտնաբերելու նպատակով: Մարտունի քաղաքի մոտ, հայտնի են հետևյալ հատուկ պահպանության կարիք ունեցող տեսակներ.

Սևանյան գնայուկ – փոքր արեալով, միոցենյա մերձափնյա ֆաունայի ռելիկտ,

Թուրքական կապտաթիթեռ – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ :

Արգիճի գետի միջին հոսանքում՝ երևակման տարածքից մոտ 4,5-5կմ հեռավորության վրա, հանդիպում է Սևանի բեղլուն և Սևանի կողակը էնդեմիկ տեսակները, որոնք գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում:

2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Սևան» ազգային պարկ. Հիմնադրվել է 1987թ-ին, տարածքը կազմում է 147456հա, տեղակայված է ՀՀ Գեղարքունիքի մարզում: Ազգային պարկի նպատակն է՝ լճի քաղցրահամ խմելու ջրի, ձկան պաշարի, բնության և պատմամշակութային համալիրների պահպանության, հանգստի և տուրիզմի կազմակերպումը: «Սևան» ազգային պարկը ընդգրկում է Սևանա լճի ջրային մակերեսը և դրան հարող ափամերձ տարածքի ջրից ազատված հատակային գրունտները՝ մինչև դրան հարող շուրջսևանյան ավտոճանապարհը: Այն ունի պահպանական (բուֆերային) գոտի, որը ներառում է լիճը երիզող լեռնաշղթաների լանջերը մինչև ջրբաժանը:

ՀՀ կառավարության 14.08.2008թ. թիվ 967-Ն և 21.10.2021թ-ի թիվ 1718-Ն որոշումներով հաստատվել են ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Գեղարքունիքի մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները

Անվանումը	Տեղադիրքը
«Սեկատար» հրաբուխ	Գավառ քաղաքից 20 կմ արլ
«Աժդահակ» հրաբուխ	Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
«Անանուն» ծալքավորում	Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
«Քարե ծով» քարացրոններ (շինգիլներ)	Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
«Արմաղան» հրաբուխ	Մադինա գյուղից 3.5 կմ արմ
«Հայրավանք» բրածո ֆաունա	Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
«Սարանց» աղբյուր	Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Խաչերի» աղբյուր	Գավառ քաղաքի արմ ծայրամասում

«Անանուն» աղբյուր	Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
«Ակնա» լիճ	Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
«Ենթալպյան մարգագետին»	Դրախտիկ գյուղի մոտ

«Թառ (Կարմիր Կատար)» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ հրաբխից հարավ-արևմուտք, Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով:
------------------------------	---

Արտադրամասի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

3.ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ ՀՀ Վայոց Ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից-արևելք՝ 85 կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի (նախկին՝ Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնը՝ Գավառ քաղաքն է: ՀՀ Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է՝ տարածքը կազմում է 5349 քառ. կմ և զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 18%-ը:

Մարզի հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության ունի հետևյալ տեսքը.

h/h	Նպատակային նշանակությունը	Ընդամենը (հա)
1	Գյուղատնտեսական	218218.8
2	Բնակավայրերի	17352.8
3	Արդյունաբերական	2440.5
4	Էներգետիկայի, տրանսպորտի և այլն	692.3
5	Հատուկ պահպանվող տարածքներ	2426.9
6	Հատուկ նշանակության	21411.5
7	Անտառային	10874.2
8	Ջրային	2215.0
	Ընդամենը	275632.1

ՀՀ Գեղարքունիքի մարզում կա 5 քաղաքային և 87 գյուղական համայնք: Գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական

համայնքները, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները: Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում առաջավոր դիրք է զբաղեցնում «ԳԵՈՂՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն:

ՀՀ Գեղարքունիքի մարզում մետաղական հանքաքարի թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված աճը կազմել է 4576.3 մլն դրամ կամ ավելացել է 55%-ով: Հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտներում հատկապես կրաքարի (Արտանիշի), քրոմիտի (Շորժա), բազալտի, բնական շինանյութերի և այլ պաշարների մասով մարզում թողարկված արտադրանքի ծավալը:

Մշակող արդյունաբերության ոլորտում հատկապես սննդի արտադրությունում մարզում թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով հաշվարկված կազմել է 9 580.9 մլն դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն: Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը:

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Կապիտալ շինարարության համար առավել բարենպաստ են

մարզի հարավային և արևմտյան հատվածները, որտեղ գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.5-0.6 սմ/տարի:

ՀՀ Գեոարքունիքի մարզը իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ²:

Մարզի մշտական բնակչության թվաքանակը կազմել է 231.8 հազ. մարդ, որից մեծ մասը՝ 162.6 հազար մարդ կամ 70.2%-ը գյուղական, իսկ 69.2 հազար մարդ կամ 29.8%-ը քաղաքային բնակչությունն է: Տղամարդկանց թվաքանակը կազմում է 116.5 հազար մարդ կամ բնակչության 50.2%, իսկ կանանց թվաքանակը՝ 115.3 հազար մարդ, որը կազմում է բնակչության 49.8%-ը: ՀՀ Գեոարքունիքի մարզի մշտական բնակչությունը նվազել է 1.5%-ով, այսինքն՝ 235.4 հազարից հասնելով 231.8 հազարի (3600 մարդ): Նույն ժամանակահատվածում քաղաքային բնակչությունը ևս նվազել է՝ 71.5 հազարից հասնելով 69.2 հազարի, այսինքն 3.2%-ով կամ (2300 մարդ), իսկ գյուղական բնակավայրերում՝ 163.9 հազարից նվազել է 162.6 հազարով, այսինքն՝ 0.8%-ով կամ (1300 մարդ):

ՀՀ Գեոարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեոարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ԶանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

Մարզի տարածքում գործում են 816.4 կմ ավտոճանապարհներ, որից միջպետական նշանակության 283.1 կմ, հանրապետական նշանակության 113.4 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ: Հիմնանորոգված են միջպետական նշանակության ճանապարհներից 269.6 կմ, հանրապետական նշանակության ճանապարհներից 86.3 կմ և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներից

151.6 կմ: Ընդհանուր առմամբ հիմնանորոգված է մարզի պետական նշանակության ճանապարհներից 499.5 կմ, որը կազմում է ճանապարհային ցանցի 61.2%-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքային 5 համայնքները ապահովված են 24 ժամյա էլեկտրամատակարարմամբ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 12 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 82.7 մլն. կվտժ՝ 29888 կՎտ ընդհանուր հզորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում է գտնվում ևս 1 փոքր ՀԷԿ-եր՝ 209 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 0.6 մլն. կվտժ-ով:

ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը, կամ մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում, մարզի գազիֆիկացված բնակարանների թիվը 46161 է, ինչը կազմում է տնային տնտեսությունների 59.9%-ը:

Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերը անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման

կայաններ, որի շնորհիվ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում նախատեսվում է մինչև 2019 թվականը կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան, որի արժեքը կազմում է 3.87մլն. եվրո: Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր:

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքներում ջրամատակարարումը իրականացվում էր օրական 2-4 ժամ: 2011-2015 թվականներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն միջազգային ներդրումների հաշվին կառուցվեց շուրջ 805 կմ երկարության խմելու ջրի ջրագծեր, որի արդյունքում մարզի բնակչության 57%-ը (հիմնականում քաղաքային համայնքներում բնակվող) ապահովված է 24 ժամյա ջրամատակարարումով, իսկ 43%-ը ըստ ջրամատակարարման Ժամանակացույցի: 2011 թվականին մարզում փողոցային լուսավորություն ունեւր ընդամենը 29 համայնք: 2012 թվականին մարզի թվով 11 համայնքներում անցկացվեց փողոցային լուսավորություն: Ներկայումս մարզի 48 համայնքներում անցկացվել է փողոցային լուսավորություն: Մարզի քաղաքային համայնքների փողոցների շուրջ 70%-ը ապահովված է փողոցային լուսավորությամբ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը

- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ տեխնիկայի աշխատանքի արդյունքում
- Դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- Ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,

- Տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,

4.2. Ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- օդային ավազան
- մակերևույթային ջրեր
- հողային ռեսուրսներ
- կենսաբազմազանություն

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- բնակչության առողջություն
- բնակչության կենսակերպ

5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՆԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա բնական միջավայրի որակի պահպանության և մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը տարբեր ազդեցությունների գիտականորեն հիմնավորված, բնակչության առողջությունը և էկոհամակարգերի անվտանգությունը երաշխավորող սահմանային թույլատրելի մեծություններն են, որոնք հաստատվում և փոփոխվում են ՀՀ շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների կողմից՝ հաշվի առնելով երկրի բնական պայմանները, գիտատեխնիկական պահանջները, միջազգային ստանդարտները:

Սահմանային թույլատրելի մեծություններն ընդգրկված են ՀՀ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգում և օրենսդրության մաս են կազմում: Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ տվյալ գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը:

Տնտեսվարողը պարտավոր է գործող նորմատիվներին համապատասխան ապահովել անվտանգության կանոնները՝ կանխարգելող, մեղմացնող միջոցառումների (մաքրող սարքավորումների, վնասազերծող կայանքների, արգելափակող միջոցների, օդափոխության, թափոնների վնասազերծման, սանիտարական գոտիների և այլն) միջոցով:

5.1 Մթնոլորտային օդ

Արտադրամասում աշխատող ավտոտրանսպորտը դառնում է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Նախնական հաշվարկների համաձայն, տեղամասի տարածքում, ավտոտրանսպորտի աշխատանքի ցածր ակտիվությամբ պայմանավորված, վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Կանխարգելող միջոցառումներից նախատեսվում են՝ սարքավորումների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, գտիչների տեղադրում արտանետման խողովակների վրա:

Աշխատանքային հրապարակների, ավազի կուտակների և ճանապարհների ոռոգում ջրցան մեքենայով, չոր եղանակին՝ օրական 1 անգամ:

Հակահրդեհային միջոցառումների կիրառում:

5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Արտադրամասի աշխատանքի ընթացքում ջրային ռեսուրսները օգտագործվում են դասակարգիչի աշխատանքի, փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով: Արտադրական նպատակների համար ջուրը օգտագործվում է փակ շրջանառու ցիկլով, ուստի արտահոսքեր չեն նախատեսվում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է փոշենստեցման համար ջրցանը իրականացում այնպիսի ծավալներով, որ չառաջանան արտահոսքեր:

5.3 Հող

Հողաձածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը:

Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակաոններում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուկային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացման նպատակով:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

Հողի աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվելու են աղբամաններ:

Առաջացած մետաղի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր/ նախատեսվում է հավաքել և իրացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:

Արտադրամասի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Շահագործման փուլում առաջացող թափոնները ներառում են.

- Շարժիչների բանեցված յուղեր, 1.19տ/տարի՝

դասիչ՝ 5410020102033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.9տ/տարի՝

դասիչ՝ 5410030302033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ
միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի
աղտոտում:

Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին տարրաների մեջ
և հանձնվում վերամշակման կետեր:

- Բանեցված ավտոդողեր, 0.6տ/տարի՝

դասիչ՝ 5750020213004

բաղադրությունը՝ ռետին, մետաղյա լարեր,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների
շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված
տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 50կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ,
թթուներ, պլաստմասսա,

բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման
արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված
տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը,
տեքստիլը, պլաստմասը և այլն:

Թափոնների առաջացման նորման 0.3մ³/տարի 1 մարդու համար:

Տեսակարար կշիռը՝ 3.6 տ/մ³:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4 [15]:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ:

5.4 Բուսական և կենդանական աշխարհ

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը: /ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18. կետ բ, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17/:

Բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Բնապահպանական միջոցառումներ

- Նոր տարածքներ չեն խախտվելու:
- Վնասակար գազերի ու անօրգանական փոշու արտանետումները լինելու են նվազագույն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահատել 500.0հազ. դրամ:

5.5 Պատմամշակույթային արժեքներ

Գործարանի տարածքում պատմամշակույթային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում արդյունահանման աշխատանքները, այդ մասին տեղեկացնել պետական լիազորված մարմնին և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց

օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

5.6 Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Նախաձեռնության հեղինակները պարտավոր են կատարել սոցիալական միջոցառումների պլանը ամբողջությամբ:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Նախատեսվում կազմակերպել երիտասարդների ուսուցում, իսկ մյուս աշխատողները կանցնեն վերապատրաստում:

Արտադրամասի աշխատանքի ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- I. Քամու արագության նվազում,
- II. Անհողմություն, չոր եղանակ,
- III. Անհողմություն, թանձր մառախուղ:

Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- I. Ավելացվում են ջրցանի ծավալները:
- II. Կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Համաձայն CH 245-71 սանիտարական դասակարգման ասֆալտի արտադրությունը պետք է ունենա մինչև 100մ չափերի սանիտարապաշտպանիչ գոտի, ինչը լիովին ապահովված է:

Աղմուկ

Արդյունահանման աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկան շահագործելիս առաջանում է աղմուկ:

Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով, որպեսզի աղմուկի մակարդակը բնակելի գոտում չգերազանցի ՀՀ գործող նորմերը:

Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:

Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան

Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը աշխատանքային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս, կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Այդ ամենը պարտավոր է ապահովել գործատուն:

Աշխատողների անվտանգությունը եւ առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի եւ առողջության պահպանման համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական եւ այլ միջոցառումներ:

Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ:

Աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: Հաշվի առնելով կազմակերպության մեծությունը, աշխատողների համար արտադրության վտանգավորության աստիճանը՝ գործատուն կազմակերպությունում ներգրավում է աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման որակավորված ծառայություն կամ այդ գործառույթն իրականացնում է անձամբ:

Արտադրամասի բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) և տեխնիկական նորմերին (ՇՏԿ) համապատասխան:

Անվտանգության ապահովման կանոններից կարելի է նշել.

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորները և ծառայողները պարտավոր են անցնել բժշկական ստուգում,
- արտադրամասի ինժեներա-տեխնիկական աշխատողները պարբերաբար, ոչ ուշ քան 3 տարին մեկ, պետք է անցնեն գիտելիքների ստուգում,
- յուրաքանչյուր բանվոր, անվտանգության տեխնիկայի գծով նախնական ուսուցումից հետո, պետք է անցնի ըստ մասնագիտության ուսուցման և հանձնի քննությունները,
- աշխատանքային յուրաքանչյուր տեղ աշխատանքներն սկսելուց առաջ հերթափոխի պետի կողմից պետք է կատարվի զննում: Աշխատանքներն սկսվելու համար պետք է տրվի գրավոր առաջադրանք,
- յուրաքանչյուր բանվոր, մինչ աշխատանքը սկսելը, պետք է համոզվի իր աշխատատեղի անվտանգության ապահովումը,

Սարքավորումները պետք է թույլ տան աշխատել միայն այն դեպքում, եթե նրանք սարքին են և աշխատում են նրանց վրա դրված գազերի թունավոր խառնուրդների չեզոքացման ու փոշեզրկման սարքերը:

Աշխատողների ջրամատակարարման համար նախատեսվում է կցիչ ցիստեռն:

Արտադրական հրապարակում աշխատողների համար նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ, որոնց կազմակերպումը նախատեսվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2012թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 15-ն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և

նորմերը» հրամանով: Համաձայն վերոնշյալ հրամանի՝ սանիտարակենցաղային հարմարություններն են հանդիսանում՝ հանդերձարանը, ցնցուղարանը, զուգարանը և հանգստի սենյակը: Սանիտարակենցաղային հարմարություններին ներկայացվող պահանջներից են.

Հանդերձարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններից զերծ կազմակերպություններում, անձնական հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են բաց հանդերձապահարաններով, կամ կախիչներով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,
- 2) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպություններում, անձնական հագուստի և աշխատանքային հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են փակվող դռներով երկտեղանոց հանդերձապահարաններով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,
- 3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխություն:
- 4) Հանդերձարանը նախատեսված է անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար:

Ցնցուղարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) ցնցուղների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով,
- 2) ցնցուղների թիվը չի գերազանցում 30-ը,
- 3) իրականացվում է բնական օդափոխում:
- 4) Ցնցուղարանը ներառվում է աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա

կազմակերպությունների սանիտարակենցաղային հարմարությունների կազմում և տեղակայվում է կից:

Լվացարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) սարքավորվում է արմնկային կամ ոտնակային կառավարման հարմարանքներով՝ վտանգավոր, մաշկի միջոցով օրգանիզմ թափանցող, խիստ հոտավետ նյութերի ինչպես նաև ստերիլ նյութերի արտադրության կազմակերպություններում,
- 2) ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օճառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով,
- 3) ծորակների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 10 աշխատողին մեկ ծորակ հաշվարկով:

Ձուգարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) սանիտարատեխնիկական սարքավորումների (զուգարանակոնքերի) թիվը սահմանվում է 15 մարդուն մեկ սանիտարատեխնիկական սարքավորում հաշվարկով,
- 2) նախամուտքում յուրաքանչյուր 4 սանիտարատեխնիկական սարքավորման հաշվարկով տեղադրվում է 1 լվացարան, բայց ոչ պակաս, քան մեկ լվացարան՝ յուրաքանչյուր զուգարանում,
- 3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխում,
- 4) սանիտարական սարքավորումների թվի 3-ից ավելի դեպքում, զուգարանում տեղադրվում է ներիռու-արտաձիգ արհեստական օդափոխության համակարգ:
- 5) Ձուգարանի և հեռավորությունը աշխատատեղերի միջև 50 մետրից ոչ ավելի է:
- 6) Ձուգարանի սանիտարական պահպանումն ապահովվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

Հանգստի սենյակին ներկայացվող պահանջներն են.

- 1) կահավորվում է համապատասխան կահույքով, կախիչներով, լվացարաններով, խմելու ջրով,

- 2) ապահովվում է տաքացման և/կամ հովացման սարքավորումներով:
- 3) Հանգստի սենյակը նախատեսվում է կազմակերպություններում, որտեղ առկա են սառեցնող և տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղեր, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններ՝ աշխատանքի ընթացքում աշխատակիցների ջերմատվության կարգավորման և աշխատողների հանգստի նպատակով:
- 4) Սանիտարակենցաղային հարմարությունները տեղադրվում են առանձին սենքերում կամ՝ արտադրություններին հարակից:

6. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Արտադրամասի տարբեր հատվածներում, պատերին պետք է փակցված լինեն տեղահանման քարտեզ-սխեմաներ:
2. Տեղամասում և արտհրապարակում նախատեսվելու են արտաքին հրաշիջման համակարգ:
3. Շինությունը պետք է ունենա հողանցում:
4. Աշխատավայրերում պետք է լինեն կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն, նախատեսված է հակահրդեհային ազդասարք:
5. Բոլոր աշխատողները պետք է ապահովված լինեն բանվորական արտահագուստով, կոշիկներով, ձեռնոցներով, ակնոցով և անցնեն հրանգավորում:
6. Մինչև 18 տարեկան մարդկաց աշխատանքը արտադրամասերում արգելվում է:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մթնոլորտային օդի որակի կանոնավոր մոնիթորինգը թույլ կտա արագ արձանագրել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար:

Մոնիթորինգի անցկացման նախնական ծրագիրը բերված է աղյուսակում:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
---------------------------	-------------------------	-----------	--------------------------	------------------------------

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	Արտադրամասի, մոտակա բնակավայր տարածք	- անօրգանական փոշի	նմուշառում, չափումներ՝ ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա – Aerocet 831, կամ նմանատիպ սարքով	Շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակ,	Հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ Տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր	Արտադրամասի հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Մտադիտարկումների համար նախատեսվող դիտակետերի տեղադիրքի սխեմատիկ հատակագիծ



Նախատեսվող մշտադիտարկման դիտակետերի կոորդինատներն են.

1. $X = 4445700$

$Y = 8528367$

2. $X = 4445990$

$Y = 8528960$

3. $X = 4445950$


$Y = 8528770$

Մթնոլորտային օդի համար՝ 1 և 2

Հողային ծածկույթի համար՝ թիվ 3

Կենսաբազմազանության համար՝ 2 և 3

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

	
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 	
« 01 » 09 2010թ	
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ	
ԲՓ - <u>88</u>	
Տրված է՝	«Շանթ-Մեյրան» ՍՊԸ գ. Վերին Գետաշեն
Գործունեությունը՝	Մարտունի-Վարդենիս ավտոմայրուղուց ձախ գտնվող տարածքում նախատեսվող ասֆալտրետտեղի և խճի արտադրամասի աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ Գեղարքունիքի մարզ
Տնօրեն՝	 Ա. Գարիբյան
Առդիր եզրակացությունը՝ 3 էջ:	

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՅՄԱՆ

ԿԱՅԱՍՈՒՄԱՆ ՏՐՎԱԾ Է

Սեփականացում
(սեփականության կամ օգտագործման)

ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ

« Ըստ - Սեփականացում » 2008

(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Փետրվարի 15-ի հարկային հաշվարկի վրա, առկա է պահված կույ ՏՈՒՆ,
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Վարկային - ֆարգիսի արժեքը չափ քանակությամբ

ՆԿԱՏԱՄԱՐ

Պատվարի պահպանումը 2009 30.11.09

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ԱՆԵՆՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ
ԻՐԱՎՈՒՆԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՉԵՎՈՐՈՒՄԻ ՄԱՏՅԱՆԻ _____ ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ԿԱՅԱՍՈՒՄԱՆ ԿԱՅԱՍՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆԵՆՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ՏԱՐԱԾԵԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԾԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԵՆԹԵՐ ԱՆԵՆՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ՏԱՐԱԾԵԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԾԱՆՈՒՄՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ *Բաժնի* (ստորագրություն)


Կ.Տ.

« 03 » 12 2009 թ.

2267579

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:200
(մասշտաբը)



Համար	Երկարություն զմբ. մ. սմ	Վահանայից Անկյունային
1- 2	200.0	7. 7.
2- 3	70.0	7. 7.
3- 4	200.0	7. 7.
4- 1	70.0	Սահմանային գծերից 7. 7. 7. 7.

Կատարող *[Signature]*
(ստորագրությունը)

[Signature] 7/6/2011 թ. 11/11/2011 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՄՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 05
 ՆՊԱՑԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Հեղուկային շինարարական և աղբի արգելանքային
 ՕԳՑԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ արգելանքային ՕԿԸԳԻ հատուցողական
 ԴՈՂԱՄԱՍԻ ԶԱՓԸ (հա) 1,4 հա
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ անհատական

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՄՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՑԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՑԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) _____
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ _____

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Դ/Դ	ԿԱՂԱՄՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՑԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ


Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ _____


Կատարողներ՝ _____
 (ստորագրություններ)

Q. J. [Signature] 11/14/2002

(ကဏ္ဍကော်မတီ အဖွဲ့အစည်း)

Մ 1:2 000

[illegible]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2009 թվականի N 887 -Ն

המחיר של המכשיר הוא 1,200 ש"ח, והוא ימכר במחיר של 1,000 ש"ח. המחיר של המכשיר הוא 1,200 ש"ח, והוא ימכר במחיר של 1,000 ש"ח.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՆԿԻ ԱՌԱՋ ԴԵՑԵՄԲՐԻ 2017 ՎԵՐԱԴԱՐՄԱՆ ԶԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՊԱՐԿ

- [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՏՆՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ

2. Հայաստանի Հանրապետության գերադասության արգելափակումը, սույն ոլորտում 3 տարվա ընթացքում Հատուկացուցվելու դեպքում՝

Հայաստանի Հանրապետության Կառավարության հրամանով

օրվանից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱԽՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

S. MURRAY

13 08 1997 3/463

לפיכך, תהיה



Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

• Ընդունվել է 1996 թ. 11.12.21

- [illegible]

1.4 km 1.4 km



ՀԱՅԿԻՆ ԲՆԱՆԱԿԱՆ ԳԵՂԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

מחלקת המחקר והפיתוח

ՀԱՅԿԱՅԻՆ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N000057

1-1-Ջ-Ս-Ն

«ՇԱՆԹ - ՍԵՅՐԱՆ» ՄՊԸ

(Զրոգտագործողի անվանումը)

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

«ՇԱՆԹ - ՍԵՅՐԱՆ» ՄՊԸ

(Ջրային ռեսուրսների կառավարման և

(Ջրօգտագործման թույլտվություն ստացողի

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՆՕՐԵՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

պահպանության մարմնի ղեկավար)

պաշտոնը, ստորագրությունը,

ստորագրությունը, ամսումը, ազգանունը

ստորագրությունը, ամսումը, ազգանունը)

Կ.Տ

Տրված է 24 02 2020 թ. Ուժի մեջ է միմչև 24 02 2023 թ.

Գործունեության ժամկետը երկարաձգված է միմչև 20 թ.

(Ջրային ռեսուրսների կառավարման և

(Ջրօգտագործման թույլտվություն ստացողի

պահպանության մարմնի ղեկավար)

պաշտոնը, ստորագրությունը, ամսումը, ազգանունը)

1. Ջրօգտագործողի հասցեն

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վերին Գետաշեն, Բ թաղամաս, փող. 3, տուն 19,

(ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը, (անունը, ազգանուն, հասցեն և հեռախոսը)
հեռ. (077) 41 13 67

2. Ջրօգտագործման վայրը

ՀՀ Գեղարքունիքի մարզ,

Վաղաշեն համայնքի վարչական տարածք

3. Ջրառի վայրը

ՀՀ Գեղարքունիքի մարզ,

Վաղաշեն համայնքի վարչական տարածք

4. Ջրօգտագործման նպատակը

/արդյունաբերական/

5. Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝

ա) մակերևութային ջրային ռեսուրսներ

բ) ստորերկրյա ջրային ռեսուրսներ

Մեկ գործող խորքային հոր

առավելագույնը՝ 6.750 հազ.մ³/տարի, 67.5 մ³/օր, 2.7 լ/վրկ

6. Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը

Տարեկան 100 օր 7 ժամյա ռեժիմով

7. Ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները

1. Ջրօգտագործման չափաքանակի վերահսկողություն և հաշվառում:

2. Ջրօգտագործման նպատակայնություն:

5. Սույն ՁԹ-ի պայմանների կատարում:

* Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորագրված ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:

N 000054 24.02.2020թ.

ՋՐՕՁՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԼԱՆԱՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 32-ի պահանջների համաձայն մշակված սույն պայմանները ենթակա են պարտադիր կատարման: Սույն պայմանների խախտումը, համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի, հիմք է ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

1. «Շանթ – Սեյրան» ՍՊԸ-ն պարտավոր է՝

ա/ ապահովել՝ N 000054 ջրօգտագործման թույլտվության ստացմամբ և ջրօգտագործման իրականացմամբ պայմանավորված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը:

բ/ արտակարգ իրավիճակներում և սակավաջրության ու երաշտի պայմաններում ապահովել՝ շրջակա միջավայրի նախարարության պահանջները, որոնք ուղղված են հասարակական շահին և շրջակա միջավայրի պահպանմանը:

գ/ իր գործունեությամբ չնվազեցնել՝ մինչև N 000054 ջրօգտագործման թույլտվության ստացումը գոյություն ունեցող ավանդական ջրօգտագործողների ջրօգտագործման իրավունքները:

դ/ ապահովել պայմաններ՝ շրջակա միջավայրի նախարարության աշխատակցի կողմից ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը հսկելու համար:

ե/ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտացված ջրաերկրաբանական կազմակերպության միջոցով կատարել խորքային հորի ռեժիմային դիտարկումներ և արդյունքները տարեկան մեկ անգամ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրային պետական կադաստրում գրանցման:

զ/ տարբեր պատճառներով ջրօգտագործման դադարեցման (ծավալների նվազեցման) հետևանքով խորքային հորի չհաճադործման դեպքում ջրային ռեսուրսների կառավարման մարմնի կողմից սահմանված ձևով և ժամկետում պահուստավորել (կոնսերվացնել) այն:

2. Ապահովել ՀՀ կառավարության 14.01.10թ. «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն որոշման պահանջները:

ա/ մինչև ջրօգտագործումն իրականացնելը ջրառի կետում սահմանված կարգով տեղադրել ջրաչափական դիտակետեր, ջրօգտագործման առցանց հոսքաչափեր՝ այդ մասին տեղեկացնելով շրջակա միջավայրի նախարարությանը:

բ/ կատարել ջրօգտագործման և ջրային ռեսուրսների աղտոտման հաշվառման աշխատանքներ և կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն:

3. Զրավագնային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվություններն ենթակա են վերանայման:

4. Հայաստանի Հանրապետությունը և ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության մարմինը սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո պատասխանատվություն չեն կրում ջրային ռեսուրսների նվազման հետևանքով ջրօգտագործողի կրած վնասների համար և չեն հատուցում դրանք:

5. Մեկ գործող խորքային հորի կոորդինատական կետն է:

X = 45° 20' 16.07"

Y = 40° 08' 48.82"

H = 1920.0 մ

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

Է. Գրիգորյան

«24» 02 2020 թ.

«Շանթ – Սեյրան» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Ղուկասյան

«24» 02 2020 թ.